Հովհաննես Թումանյան

Դժոխքի հանդեպ

Հո՜ւշ. հասավ օրը՝ վերջի՜ն, ահավո՜ր:
Սըրով ու հըրով բացվում էն էսօր
Հայոց դըժոխքի դըռներն ամրափակ.
Սարսափի պիտի աշխարհքը համակ,

Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,
Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից:
Ո՜ւհ, ինչքա՜ն մութն է գարշահոտ ու պաղ...
Ինչքան ոսկորնե՜ր, կըմախքնե՜ր անթաղ...
Էլ ի՞նչ կա հեռվում... հեռվի խավարում...

Ով է իմանում... ում աչքն է զորում...
Մեջտեղը մենակ, ժեռուտ բարձունքին,
Կանգնած է մայրը հողմերի տակին.
Որդու արյունը իր ձեռքն են տըվել.
Խըմիր սուլթանի կենացը դու էլ...

Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,
Այժըմ, էն ժայռին կանգնած կիսամերկ,
Անուժ ու ապուշ խելագար է մի,
Բաժակը ձեռքին, որ պիտի խըմի...
Կանգնած է մենակ, և լոկ մոլեգին

Հողմերն են ոռնում, ու նրրանք չորս դին...
Բայց՝ հո՛ւշ. լռությո՛ւն... մրթին, ահավոր
Երկինք են նայում կրմախքները չոր,
Ու իրենց կարկամ շրրթունքները բաց՝
Խո՛սք են ասելու աշխարհքի դիմաց,

Խոսք, որ չի լրսված դեռևս լուսնի տակ...
Սարսափի պիտի աշխարհ բովանդակ
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից
Որ մարդ է ծրնվել մարդու նրմանից:

1916